ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **15/09/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/1
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Վլադիմիր Առաքելյանը, Մելինե Գասպարյանը, Տիգրան Գեղամյանը, Ալեքսանդր Խաչատուրյանը, Նաիրի Հակոբյանը, Էմիլ Հարությունյանը, Մարգարիտա Հարությունյանը, Նազիկ Հարությունյանը, Նաիրա Մելիքյանը, Գևորգ Պողոսյանը, Պավել Ցուգունյանը, Գուրգեն Օսիպյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Արամ Վիրաբյանը, Արթուր Մովսիսյանը, Աննա Չոբանյանը, Արմեն Սիմոնյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***՝
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 15-ի հինգերորդ նստաշրջանի հերթական առաջին նիստի հետևյալ օրակարգը.
1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի խորհրդանիշերի մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կանոնակարգելու մասին.
3) Քաղաքային բնակավայր ընդգրկող Աբովյան համայնքում տնային կենդանիներ

պահելու կարգը հաստատելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 192-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին.
5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.
6) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 199-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 197-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
8) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 198-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
9) Աբովյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման իրավունքով համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրելու մասին.
10) Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի թիվ 10 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին.
11) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի 1-ին փողոցի թիվ 72/1 հասցեում գտնվող 0.06335 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
12) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի Կարմիր բանակայինների 6-րդ փողոցի 10/2 հասցեում գտնվող 07-018-0101-0110 կադաստրային ծածկագրով 0.02025 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
13) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0128-0184 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
14) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0128-0341 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
15) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0134-0004 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
16) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0138-0043 կադաստրային ծածկագրով 0.2374 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
17) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0140-0008 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
18) Աբովյան քաղաքի 2-րդ արդյունաբերական թաղամասի թիվ 17 հասցեում գտնվող 0.52027 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
19) Աբովյան քաղաքի 2-րդ արդյունաբերական թաղամասի թիվ 28/3 հասցեում գտնվող 1.51449 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
20) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0315-0249 կադաստրային ծածկագրով 0.17236 հեկտար մակերեսով հողամասի նպատակային

նշանակությունը փոփոխելու մասին.
21) Սոնա Իսրայելյանին պատկանող 0.10928 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.
22) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 07-002-0063- ծածկագրից 0.0223 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.
23) «ԷԼԻՏ ՓՐՈՋԵՔԹ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.
24) «ԷՅ ՎԻ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող 0.73133 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.
25) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 7-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասի 59/1 հասցեում գտնվող հողամասը Մարինե Մարտիրոսյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
26) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Մայակովսկի գյուղի 13-րդ փողոցի թիվ 77/2 հասցեում գտնվող հողամասը Հերմինե Պետրոսյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
27) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքերն աճուրդային կարգով օտարելու մասին.
28) Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 16-ի N 19-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
29) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
30) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրելու մասին.
31) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն աճուրդային կարգով օտարելու մասին.
32) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 04-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
33) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 3-րդ, 22-րդ, 23-րդ և 30-րդ ենթակետերում ներառված հարցերը հանել օրակարգից, քանի որ առաջացել էր լրացուցիչ ուսումնասիրության կարիք:

Օրակարգը հաստատվեց առաջարկված տարբերակով:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 127-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 5.1-րդ մասի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի, հիմք ընդունելով Աբովյան համայնքի խորհրդանիշերի ստեղծման մրցութային հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 21-ի արձանագրությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի զինանշանը՝ նկարագիրը համաձայն հավելված N 1-ի:
2. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի դրոշը՝ նկարագիրը համաձայն հավելված N 2-ի,

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի օրհներգը՝ համաձայն հավելված N 3-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Իրավական հարցերի մշտական հանձնաժողովի» նախագահ Գ.Գալստյանը հայտնեց, որ հանձնաժողովի նիստ տեղի չի ունեցել և հարցը թողնվել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 128-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի, 10-րդ հոդվածի 4-րդ մասի, 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 19-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպում և իրականացնում է «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը, Առինջ բնակավայրում՝ «Առինջի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (միասին այսուհետ՝ Կազմակերպություն)՝ իրենց կանոնադրական

լիազորությունների շրջանակներում և սույն որոշմամբ սահմանված նորմերին ու պայմաններին համապատասխան:
2. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են Աբովյան համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային ծրագրով:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման իրականացման կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը՝ համաձայն հավելված N 2-ի:
5. Հաստատել շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարի կողմից թույլտվության տրամադրման կարգը՝ համաձայն հավելված N 3-ի:
6. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելված N 4-ի:
7. Կազմակերպության ղեկավարը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարների հաշվարկման և գանձման գործառույթների իրականացման արդյունքների վերաբերյալ՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Իրավական հարցերի մշտական հանձնաժողովի» նախագահ Գ.Գալստյանը հայտնեց, որ հանձնաժողովի նիստ տեղի չի ունեցել և հարցը թողնվել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 129-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 192-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝
1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում տեղական վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին»

N 192-Ն որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետով հաստատված հավելված 3-ի 2-րդ կետում «կազմակերպության» բառից հետո լրացնել «և Աբովյան համայնքի «Վերին Պտղնի գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի սեպտեմբերի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

«Իրավական հարցերի մշտական հանձնաժողովի» նախագահ Գ.Գալստյանը հայտնեց, որ հանձնաժողովի նիստ տեղի չի ունեցել և հարցը թողնվել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 130-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈՐԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1.8-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին
ո ր ո շ ու մ է՝
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն N 1 - N 8 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 131-Ն /

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈՐԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 199-Ն որոշմամբ հաստատված N 3, N 4 և N 7 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1-N 3 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 132-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 197-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈՐԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 197-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ՝
1) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի 64-րդ տողի 4-րդ սյունակում «160 000» թիվը փոխարինել «180 000» թվով, 5-րդ սյունակում «640 000» թիվը փոխարինել «720 000» թվով, «Ընդամենը» տողում 5-րդ սյունակում «8 825 000» թիվը փոխարինել «8 905 000» թվով,
2) «Ընդամենը» մասի 5-րդ սյունակում «51 503 000» թիվը փոխարինել «51 583 000» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 133-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 198-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 198-Ա որոշմամբ հաստատված 3-րդ և 17-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 1-2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 134-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 3 893 113 (երեք միլիոն ութ հարյուր իննսուներեք հազար հարյուր տասներեք) դրամ համախառն հաշվեկշռային արժեքով գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ համաձայն 1-6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 135-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 10 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 2023 թվականի օգոստոսի 16-ի N 3006800 ակտը, լուծարման հանձնաժողովի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 04-ին կազմված լուծարման հաշվեկշիռը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի թիվ 10 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման հաշվեկշիռը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքում հանձնաժողովը հարցը թողել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 136-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 72/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.06335 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ

հաստատված կարգի 60-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 26-ի N 1/փ-226 դրական եզրակացությունը, հաշվի առնելով «ԿՈՄՊԼԵԿՍ ՍՓԼԱՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Արման Իգնաթևոսյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի փետրվարի 07-ի N S-207), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «ԿՈՄՊԼԵԿՍ ՍՓԼԱՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի սեպտեմբերի 25-ի N 25092021-07-0133 վկայական) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի 1-ին փողոցի թիվ 72/1 հասցեում գտնվող 0.06335 հեկտար մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 137-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ 10/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-018-0101-0110 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.02025 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով «ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սևակ Ավետյանի հայտը (մուտք՝ 2023 թվականի օգոստոսի 14-ի N S-1373), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. «ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի ապրիլի 12-ի N 04052023-07-0170 վկայական) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի Կարմիր բանակայինների 6-րդ փողոցի 10/2 հասցեում գտնվող 07-018-0101-0110 կադաստրային ծածկագրով 0.02025 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (կորիզավոր պտղատու այգի՝ 0.0140 հեկտար և այլ հողատեսք՝ 0.00625 հեկտար մակերեսներով) հողամասի

նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի և բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներում) տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Դ. Զարոյանն առաջարկեց օրակարգի 1-ին կետի 12-20-րդ ենթակետերում ներառված հարցերը միաժամանակ դնել քվեարկության, քանի որ հարցերն ունեն նույն բովանդակությունը: Հարցերը դրվեցին քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 138-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-043-0128-0184 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Արտակ Մարտիրոսյանի հայտը (մուտք՝ 2023 թվականի օգոստոսի 15-ի N Ք-5082), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Արտակ Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի մարտի 1-ի N 01032023-07-0144 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0128-0184 կադաստրային ծածկագրով 0.5 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (արոտավայր) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ անասնապահական տնտեսություն կառուցելու

նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով, միայն սեփականատիրոջ հայտի համաձայն, համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Մարտիրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 139-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-043-0128-0341 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով «ՄԱՌՆԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Վահագն Զալինյանի հայտը (մուտք՝ 2023 թվականի օգոստոսի 29-ի N S-1456), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. «ՄԱՌՆԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 31-ի N 31072023-07-0073 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0128-0341 կադաստրային ծածկագրով 4.50143 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով, միայն սեփականատիրոջ հայտի համաձայն, համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի

նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 140-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-043-0134-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Անդրանիկ Մեջլումյանի, Արմեն Քամալյանի և Արթուր Ջաքարյանի լիազորած անձ Գեղամ Շահնազարյանի հայտը (մուտք՝ 2023 թվականի օգոստոսի 17-ի N Ք-5129), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Արմեն Քամալյանին, Անդրանիկ Մեջլումյանին և Արթուր Ջաքարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի հունվարի 16-ի N 16012023-07-0084 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0134-0004 կադաստրային ծածկագրով 0.352 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի և բանջարեղենի մշակման և պահածոյացման տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 141-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-043-0138-0043 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.2374 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Գրիգոր Հայրապետյանի հայտը (մուտք՝ 2023 թվականի հուլիսի 25-ի N Ք-4535), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Գրիգոր Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի դեկտեմբերի 13-ի N 13122022-07-0073 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0138-0043 կադաստրային ծածկագրով 0.2374 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (հնդավոր) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ անասնապահական տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով, միայն սեփականատիրոջ հայտի համաձայն, համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գրիգոր Հայրապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 142-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-013-0140-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Արամ Ներսիսյանի հայտը (մուտք՝ 2023 թվականի օգոստոսի 31-ի N Ք-5498), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Արամ Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի մայիսի 30-ի N 30052022-07-0080 վկայական) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0140-0008 կադաստրային ծածկագրով 0.179 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով, միայն սեփականատիրոջ հայտի համաձայն, համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Ներսիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

